

**<<Ամբոր>> հասարակական կազմակերպության և Կոտայքի մարզպետարանի  
համագործակցության նպատակն ու խնդիրները**

ՀՀ Կոտայքի մարզպետարանի և <<Ամբոր>> ՀԿ-ի համագործակցության թիրախ է հանդիսանում թրաֆիկինգի դեմ պայքարը մարզում: **Միասին արձագանքենք թրաֆիկինգի դեմ պայքարին**, խորագրով համագործակցությունը սկիզբ է առել ս/թ հոկտեմբեր ամսին և այն առաջին հերթին նպատակաուղղված է մարզի համայնքներում իրականացնել թրաֆիկինգի զոհերի աջակցություն: Կազմակերպվող սեմինարները կրելու են շարունակական բնույթ, որին մասնակցելու են մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների և համայնքների ղեկավարները: